



Ա. Ա. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ, *Բայր ժամանակակից հայերենում*, գիրք առաջին, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1962, 729 էջ, գինը 2 ռ. 56 կ.:

Բայր հայերենի խոսքի մասերի մեջ գրավում է ուրույն տեղ: Իր լեզվական-քերականական կարգերով ու բազմազան դրսևորումներով նա, իրոք, ամենահարուստ ու հետաքրքրական խոսքի մասն է, որի ուսումնասիրությունը գիտական մեծ արժեք է ներկայացնում հայերենի քերականական կառուցվածքի էությունը և ժամանակի ընթացքում նրա մեջ կատարված փոփոխությունները բացահայտելու տեսակետից:

Բայի մասին, մանավանդ վերջին տասնամյակում, գրվել են մի շարք աշխատություններ, որոնց մեջ այս կամ այն չափով իրենց գիտական մեկնությունն են ստացել բայական շատ երևույթներ կամ իրողություններ: Սակայն, այդ ամենով հանդերձ, բայը (մանավանդ ժամանակակից հայերենի բայը), իբրև ծավալուն խոսքի մաս, նրա լեզվական նյութերի և բայական համակարգում կատարվող տեղաշարժերի տեսանկյունից մինչև այժմ ամբողջական քննության նյութ չէր դարձել:

Հայագիտության մեջ առաջին անգամ բայական խոսքի մասի հանգամանալի ուսումնասիրությունը ձևավորվել է լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանը. տարիների ընթացքում նրա կատարած աշխատանքի մի մասը ընթերցող հասարակայնության է ներկայացվել վերջերս: Խոսքը հեղինակի «Բայր ժամանակակից հայերենում» (գիրք առաջին) ծավալուն աշխատության մասին է: Աշխատության մեջ հանգամանորեն քննվել են բայական մի շարք կարևոր երևույթներ ու իրողություններ. որ բառերը ի՞նչ հիմունքով բայական խոսքի մաս են կալմում, որո՞նք են բայի բնորոշ հատկանիշները, ինչպիսի՞ կառուցվածքային պատկեր ունի բայը, ի՞նչ բայածանցներ կան և ի՞նչ իմաստ են արտահայտում դրանք, որո՞նք են բայական լծորդները և լծորդությունները, բայահիմքերը, ինչպիսի՞ առանձնահատկություններով են հատկանշվում ժամանակակից հայերենի դերբայ-

ները, և, վերջապես, ո՞րն է բայական սեռի քերականական կարգը և ի՞նչ պատկեր է ներկայացնում դա,— ահա համառոտակի այն հարցերը, որ քննել է հեղինակը, կատարելով լեզվական նյութերի համակողմանի վերլուծություններ:

Խոսելով ամենից առաջ բայի և նրա խոսքի մասային ու բառական բնույթի մասին, Ա. Աբրահամյանը համապատասխան օրինակների միջոցով պարզում է բայի ամենակարևոր հատկանիշներից մեկի՝ բայիմաստի էությունը և ցույց տալիս, որ բայիմաստով բայը արտացոլում է մատերիայի հատկանիշ հանդիսացող «օբյեկտիվ բնույթ ունեցող շարժումը», և հետևաբար՝ «նրան, որպես խոսքի մասի, հատուկ է հատկանիշի արտահայտումը» (էջ 22):

Բայց դա, իհարկե, բայի միակ բնորոշ հատկանիշը չէ. «Բայը,— ինչպես ճիշտ կերպով նկատում է հեղինակը,— որպես խոսքի մաս գործողության, եղելության, դրության վերացարկումը արտահայտում է քերականական բազմազան կարգերի ու հատկանիշների խիստ բարդ համակարգով», նրան բայիմաստից բացի հատուկ են նաև «սեռի, բայական հոլովառության, խոնարհման, եղանակի, դեմքի ու նրա թվի, կերպ-վիճակային քերականական կարգերն ու հատկանիշները», և հետևաբար՝ դրանց համատեղ կամ այլ կերպ ասած՝ բայական ողջ համակարգի ուսումնասիրությամբ կարելի է ամբողջական պատկերացում կազմել բայի մասին:

Ա. Ա. Աբրահամյանի աշխատության արժեքը հենց այն է, որ այդտեղ բայը ուսումնասիրվում է իր ողջ համակարգով, լեզվական-քերականական բոլոր դրսևորումներով, ինչպես նաև զարգացման ընթացքի մեջ գտնվող իրողություններով: Բայական ողջ համակարգի կամ քերականական կարգերի ու հատկանիշների պատկերը բացահայտելու համար հեղինակը առաջնահերթ է դարձրել «բայական բառույ-

թի» կառուցվածքի քննությունը, որը աշխատության մի ծանրակշիռ մասն է կազմում (էջ 89—208): Լեզվաբանը նախ քննում է բայաստեղծական ձևույթները, նշում հայերենի բայական բառակազմության կուռ ու հաստատուն օրենքները, հանգելով այն եզրակացության, որ ժամանակակից հայերենում կան բայական բառույթների երկու հիմնական տեսակի՝ համադրական և վերլուծական կազմություններ: Համադրական բառակազմությունները նրանք են, որոնց «բաղադրիչները մի ամբողջական բառաձևում ըստ ձևի անանջատ են, համադրված են միմյանց հետ և մի բառապատկեր են ներկայացնում (ինչպես՝ աղալ — աղ + ալ, վազել — վազ + էլ, իջնել — էջ + ն + էլ, մեծալուս — մե + ծան + ալ)» (47—48), իսկ վերլուծականներն էլ հարադրական բայական կազմություններն են, որոնց թիվը «հազարների է հասնում»:

Բայաբառակազմական տեսակների նման ճիշտ տարաբաժանումն էլ լայն հնարավորություն է ընձեռել հեղինակին՝ բացահայտելու ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կազմությունների պատկերը, նրանց դոսևորման յուրահատկությունները: Համադրական և վերլուծական բայերը քննելիս հեղինակը կատարել է նաև համապատասխան ենթատարաբաժանումներ, նպատակ ունենալով ցույց տալ, թե բայաբառակազմական տեսակներից յուրաքանչյուրը իր ներսում ինչպիսի տարրերություններ է երևան հանում: Նույն այդ ելակետից էլ հենց աշխատության հիշյալ բաժնում նախ՝ մատնանշվում են համադրական կազմությունների առաջացման եղանակները, բնորոշ փաստերի ու դրանց վերլուծության միջոցով ցույց տրվում, որ համադրական բայերը կազմվում են ոչ միայն բայարմատներից, այլև այլ խոսքի մասերից կամ անվանական բառերից, որը «ժամանակակից հայերենի սիրած լեզվական-քերականական միջոցներից մեկն է» (58), և, գործուն լինելով, շարունակ համալրում ու հարստացնում է հայերենի բառագանձի բայական բաժինը: Բացի այդ, նրանք կազմվում են նաև բայարմատների կրկնության մեջ, որպիսի եղանակով առաջ եկած բայերն էլ կոչվում են համադրական կրկնավոր բայեր: Հեղինակը բացահայտում է խորապես այդպիսի բայերի կազմության առանձնահատկությունները և որոշում նրանց տեղն ու դերը ժամանակակից հայերենի բայական համակարգում: Համադրական բայական կազմության առնչակցությամբ քննվում են նաև այն համադրական բայակազմությունները, որ կապվում են բառափոխադրությունների հետ, երևան հանելով դրանցով պայմանավորված օրինաչափություններ:

Եվ այնուհետև, աշխատության մեջ նույն ձևով վերլուծվում են հարադրական կամ վերլուծական կազմության բայերը, որոնց քննության հիմնական էլ կազմել է այն ճիշտ սկզբունքը, որ դրանք ինքնուրույն բառեր են և «իրենց ընդհանուր միասնական իմաստի հիման վրա ճանաչվում են իբրև բայական արժեք ունեցող բառական միավորներ» (157): Իբրև այդպիսին, նրանք մտնում են բայական խոսքի մասի մեջ և հատկանշվում են լեզվական-քերականական այն բոլոր կարգերով, որ հատուկ են բային ընդհանրապես: Այդ ելակետից էլ լեզվաբան Աբրահամյանը բացահայտել հարադրական բայերի կառուցվածքի բազմազան դոսևորումները, նշել կազմության բազմաթիվ ձևերը և ցույց տվել նրանց բաղադրիչ մասերի կապն ու հարաբերությունները, հանգելով միանգամայն ճիշտ եզրակացությունների:

Թե՛ հարադրական և թե՛ համադրական բայակազմության հարցերը մեկնաբանելիս՝ Ա. Աբրահամյանը, սակայն, չի բավարարվել սոսկ ժամանակակից հայերենի տվյալներով: Անհրաժեշտ դեպքերում նա օգտագործել է հայերենի նախորդ փուլերի համապատասխան լեզվական փաստերը, ուրվագծել բայական երկվույթների զարգացման ընթացքը, ինչպես նաև այն օրգանական կապն ու միասնությունը, որ առկա է դրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի բայական երկվույթների միջև: Բայի հանգամանակից ուսումնասիրությունը հեղինակը կատարել է ո՛չ թե սոսկ սինխրոնիկ (համաժամանակյա) մեթոդով, այլ հաճախ հանդես է բերել դիսինխրոնիկ (տարածամանակյա) մոտեցում, որպիսի սկզբունքն էլ կիրառվել է բայական բոլոր հարցերի քննության ժամանակ և իրավամբ աշխատության հատկանշական կողմերից ու կարևոր արժանիքներից մեկն է դարձել:

Պատկերը այդպես է նաև աշխատության՝ «Բայատիպարներն ըստ ածանցման և բայածանցների նշանակությունների ժամանակակից հայերենում» բաժնում (էջ 209—295), որտեղ առաջին անգամ ամբողջ խորությամբ լուսաբանվում են հայերենի բայածանցները և ցույց տրվում քերականական իմաստներն ու նշանակությունները: Այդ նույն հիմքի վրա հեղինակը ածանցների խմբաբաժանումներ է կատարել, գտնելով, որ կան՝ ա) բաղադրության-քերականական ածանցներ (ան, նն, չ, ն), «որոնք անմիջապես մասնակցում են բայական բառույթի բաղադրմանը և ապա զուգահեռաբար ունենում են և քերականական որոշ իմաստներ» (213) և բ) բուն-քերականական ածանցներ, որոնք «սեռի և կերպի ցուցիչներն են» և առ-

նում են իրենց մեջ մի կողմից՝ կրավորական ու պատճառական ածանցները, իսկ մյուս կողմից՝ բազմապատկական (և զորացման կամ սաստկական) կերպածանցները:

Գիտական ճիշտ ելակետից կատարված՝ ածանցների նման խմբաբաժանումը իր հերթին հնարավորություն է տվել հեղինակին՝ բացահայտելու բայածանցների բայակազմական դերն ու նշանակությունները, գործունեության շափր, միմյանց նկատմամբ երևան հանած իմաստային բերականական տարբերությունները և առանձին յուրահատկությունները: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել մանավանդ «ան» ածանցի վրա, որ հայագիտության մեջ երկար ժամանակ դրվել է ն. և, չածանցների կողքին և դիտվել իբրև սոսկ ածանց: Մերժելով նման սխալ բմբռնումը, Ա. Աբրահամյանը լեզվական մի շարք փաստերով հաստատում ու ապացուցում է, որ այդ ածանցը բայակազմության գործում բավական մեծ դեր ունի և բայերի մեծ մասի մեջ հանդես է գալիս վերածության նշանակությամբ:

Նրբ հեղինակը քննում է բայական լծորդներն ու լծորդությունները, հիմնականում հենարան ունենալով արևելահայ դրական լեզուն, հաշիվ է առնում գրաբարում, միջին հայերենում նրանց ունեցած վիճակը և կոնկրետ փաստերի բազմաթիվ ցույց տալիս ոչ միայն լծորդների ու լծորդությունների արդի պատկերը, այլև այն կերպարանափոխությունները, որ կրել են դրանք հայերենի երկարատև զարգացման ընթացքում՝ ծառայելով բերականական համապատասխան ձևերի «խիստ որոշակի ընդհանրացման և շատ տարբերությունների համահարմման» նպատակին:

Ինչպես լեզվական ամեն մի երևույթ, այնպես էլ բայական լծորդներն ու լծորդությունները կերպարանափոխությունների ու տեղաշարժերի պրոցես են ապրել: Եւ շարունակվել է նաև աշխարհագրորի փուլում. դրա լծորդների ու լծորդությունների համակարգում կատարվող տեղաշարժերը, լծորդափոխությունների և լծորդական հարաբերակցության երևույթները նույնպես համապատասխան օրինակներով վերլուծելով՝ Ա. Աբրահամյանը պարզում է, թե գրական լեզվում գործող երկու ա և ն լծորդություններից որը ինչ պատկեր է ներկայացնում, հաստատելով միաժամանակ, որ արդի շրջանում մոտ վեց հազարի հասնող համադրական բայերի գերակշռող մասը կազմում են ն լծորդության բայերը, իսկ ա լծորդության բայերը դրանց կեսից էլ պակաս են:

Հայերենի զարգացման ողջ ընթացքում որոշակի տեղաշարժեր են կատարվել նաև բայահիմքերի մեջ, որի ուսումնասիրությունը, մեծ

նշանակություն ունենալով ժամանակակից հայերենի բայական ձևերի կազմության մասին ամբողջական պատկերացում կազմելու տեսակետից, նույնպես աչքի է ընկնում մի շարք արժանիքներով. այնտեղ սակայն առավել կարևորն այն է, որ հեղինակը ոչ միայն երկու բայահիմքերի (անորոշի և անցյալ կատարյալի) կազմության նկարագիրը կամ տարբերություններն է տալիս, այլև բացահայտում է յուրաքանչյուրի ներսում կատարվող տեղաշարժերի բնույթը և տարբեր ձևերի միջև մղվող պայքարը: Անցյալ կատարյալի ցոյական և անցոյական հիմքերը քննելիս նա, օրինակ, բազմազան փաստերի հիման վրա և դրանց մի մասի համեմատությամբ գտնում է, որ մի շարք ձևերում «զգացվում է գրական լեզվի ընդհանուր հակումը դեպի ցոյականություն» (339), որը և այլ բան չէ, քան «բայահիմքերի կանոնավորության, պարզության, ընդհանրության ու կազմության կուռ օրինաչափությունների լավագույն արտահայտություններից մեկը»:

Աշխատության մեջ առանձին տեղ է բրնում ժամանակակից հայերենի գերբայական ձևերի քննությունը (էջ 357—418), որը, հեղինակի՝ «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» արժեքավոր աշխատության յուրատեսակ ամփոփումը լինելով, գերբայների ընդհանուր նկարագիրը տալուց զատ երևան է հանում արևելահայ գրական լեզվի բայական համակարգում նրանց բռնած տեղն ու դիրքը. որոնք են գերբայների՝ իբրև բայի անդամ ձևերի, էական գծերը, ինչով են զանազանվում իրարից և ինչպիսի՝ բերականական կարգերով են հատկանշվում նրանք,— ահա այն գլխավոր հարցերը, որոնց վրա ծանրացել է հեղինակը, տալով նրանց սպառիչ պատասխաններ: Այստեղ ավելի հանգամանորեն է քննվել անորոշ գերբայը, որ «գերբայների ցանկում մեզ ներկայանում է իբրև բայական հիմնական ձև, գերբայական ելակետային ձև» (365): Այդ գերբայից է ծագում ժամանակակից արևելահայ գրական լեզվի գերբայների մի մասը՝ ապառնին, անկատարը, ժխտականը, և հետևաբար՝ նրա էության ճիշտ բացահայտումը ինքնին լայն բմբռնում ու պատկերացում է տալիս մյուս գերբայների ու լեզվի կառուցվածքի մեջ դրանց ունեցած դիրքի մասին: Այս բաժնում միանգամայն նոր է գերբայական ձևերի մեջ խոսքի մասային փոխանցումների հարցը, որը քննելիս՝ Աբրահամյանը բազմաթիվ պատմական փաստերով ցույց է տալիս, թե ինչպես լեզվի երկարատև զարգացման ընթացքում մի շարք բայաձևեր տեղական իմաստափոխությամբ դուրս են եկել բայական խոսքի մասի ոլորտից և ձևոր բերել այլ խոսքի մասի (ցոյականի,

ածականի և այլն) նշանակություն: Այս ամիսնով րստ էության ավարտվում է աշխատության այն մասը, որ հիմք է դարձել ժամանակակից հայերենի բայական սեռի քերականական կարգի քննության համար, որը նույնպես աշխատության մեջ պատկառելի տեղ է բռնում (419—722):

Սեռը, իբրև բայը բնորոշող էական քերականական կարգերից մեկը, շատ վաղուց զբաղեցրել է հայ լեզվաբաններին. սեռի մասին արտահայտվել են թե՛ զրարարի հին ու նոր քերականները, թե՛ աշխարհաբարի տեսաբան-լեզվաբանները և թե՛ հայերենի ձևաբանությունում և հատկապես բայի ուսումնասիրությունում զբաղվողները: Այդպիսով, հայագիտական միտքը շարունակ առաջ է մղել բայի սեռի ուսումնասիրության գործը՝ հասնելով, անշուշտ, մեծ նվաճումների, որոնք և ամենայն բարեխղճությունով պատկերելի ու գնահատելի է հեղինակը: Եվ իրոք, նախքան բայի սեռի՝ իր սեփական քննությունը կատարելը, նա «Հարցի պատմությունն ափնարկ» բաժնում պարզաբանում է, թե ինչպես է սեռն ըմբռնվել ու լուսաբանվել հին ու նոր քերականների և լեզվաբանների կողմից, ով ինչ նորություն է բերել, սեռի և նրա տեսակների վերաբերյալ ինչպիսի նիշտ և սխալ տեսակետներ են հայտնվել և այլն: Ա. Աբրահամյանը մի կողմից բացահայտում ու մերժում է սեռի ըմբռնման սխալները, մյուս կողմից ցույց է տալիս զրականն ու արժեքավորը նշելով հատկապես անվանի լեզվաբանների Ա. Այտրեյանի, Ս. Պալասանյանի, Մ. Աբելյանի, Հ. Աճառյանի և ուրիշների նշանակալի ծառայություններն այդ խնդրում: Այդպիսով կարևոր հարցը, այնուհանդերձ, իր լիակատար ու ամբողջական լուսաբանությունը չի ստացել հայագիտության մեջ, սեռային շատ հարցեր կամ բոլորովին քննության չեն ենթարկվել և կամ մնացել են աղուտ, լիովին չբացահայտված: Սեռի քերականական կարգի Ա. Աբրահամյանի կատարած ուսումնասիրությունը նախորդներից տարբերվում է նրանով, որ հեղինակը այն քննության է առել իր ներքին-իմաստային, ձևակազմական-ձևաբանական և կապակցական-շարահյուսական բոլոր հատկանիշներով, սեռի վերաբերյալ գիտությունը դնելով մի նոր բարձր աստիճանի վրա:

Եվ իսկապես. չկա բայի սեռին վերաբերող կամ նրան առնչվող որևէ գլխավոր ու «երկրորդական» հարց, որ քննված, օրինակներով հաստատված ու գիտական խոր բացատրություն ստացած չլինի աշխատության մեջ: Ուստի նման համակողմանի քննությունը հեղինակից պահանջել է մեծ ջանքեր և ստիպել հաղթահարելու բազմաթիվ դժվարություններ:

Բնորոշն էլ հենց այն է, որ նա ոչ միայն կարողացել է հաղթահարել դրանք, այլև բայի սեռի նկատմամբ հանդես է բերել նոր մոտեցում, կատարել սեռատեսակների նոր դասակարգումներ, որոնք ավելի խորն են բացահայտում բայական այդ կարևոր քերականական կարգի էությունն ու առանձնահատկությունները:

Անցողականությունն ու անանցողականությունը դարձնելով բայի սեռադասերի որոշման հիմնական, Ա. Աբրահամյանը գտնում է, որ կան անցողական և անանցողական սեռադասեր. անցողական սեռադասի մեջ են մտնում ներգործական սեռը և այն բայերը, որոնք ունեն պատճառական սեռային առում և հանդես են գալիս իմաստային ու կառուցվածքային բավական հետաքրքիր դրսևորումներով, իսկ անանցողականի մեջ էլ մտնում են չեզոք սեռը, կրավորական սեռը, միջին-անդրադարձ սեռի առումը և կրավորաձև չեզոք բայերը, որոնք նույնպես աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ դրսևորումներով: Այս բաժնի ամենամեծ արժեքը հենց այդ դրսևորումների բացահայտումն ու վերլուծությունն է, որ հեղինակը կատարել է հմտությամբ, անհրաժեշտ դեպքերում օգտագործելով հայերենի նախորդ փուլերի համապատասխան լեզվական տվյալները, ցույց տվել, ասենք, թե ինչպիսի իմաստային ու կառուցվածքային տեսակներ ունեն պատճառական սեռային առման բայերը, որոնք են ածանցական կամ համադրական պատճառական ձևակազմության առանձնահատկությունները, ինչ պատկեր են ներկայացնում վերլուծական կամ հարադրական պատճառական կազմությունները, ինչ յուրահատուկ դժեր ունեն կրավորական ու չեզոք սեռի բայերը, ինչով են տարբերվում կրավորական սեռի, միջին-անդրադարձ սեռային առման և կրավորաձև չեզոք բայերը իրարից և այլն: Բայի սեռի քննության մեջ հեղինակը այն միտքն է արտահայտում, որ սեռը ևս ոչ թե քարացած ու անփոփոխ, այլ անընդհատ զարգացող քերականական կարգ է, որը ինչպես հայերենի պատմական զարգացման ողջ ճանապարհին, այնպես էլ նրա արդի շրջանում ապրում է որոշակի տեղաշարժերի պրոցես, որի մեջ էական դեր են խաղում գլխավորապես բառիմաստի փոփոխությունները, որոնք առաջ են բերում սեռային երկփեղկումներ, հիմք դառնալով կրկնասեռության երևույթի համար: Այդ հարցի քննությամբ ավարտվում է «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության առաջին դիրքը, ու ի բազմաթիվ այլ արժանիքներից հարկ ենք համարում նշել նաև երկուսը. նախ՝ հանգամանորեն քննելով ու վերլուծելով բայի քերականական կարգերի ու երևույթ:

ների մեծ մասը, հեղինակը չի բավարարվել սոսկ դրանց նկարագրությամբ, այլ հարցերի վերլուծության հիմքի վրա ամեն դեպքում հանել է համապատասխան եզրակացություններ, ընչպես նաև կատարել տեսական ընդհանրացումներ: Տեսական արժեքից բացի, աշխատությունը աչքի է ընկնում նաև իր գործնական-ուղեցուցային նշանակությամբ. անկանոն բայերի անցյալ կատարչի, պատճառական բայերի կազմության, բայական լծորդությունների, սեռի և այլնի մասին խոսելիս, օրինակ, հեղինակը դրական երկերից առնված կոնկրետ օրինակներով մատնացույց է անում լեզվական շեղումները և, բացատրելով դրանց գործադրման պատճառները, առաջադրում սխալներից հրաժարվելու պահանջը:

Այս ամենի հետ մեկտեղ գրախոսվող աշխատությունը զերծ չէ թերություններից: Բայց դրանք կամ մասնակի բնույթ են կրում, ուստի և սովոր չեն գցում մեկնաբանված հարցերի դիտական արժեքի վրա, և կամ էլ՝ վերաբերում են այնպիսի հարցերի, որոնք սակավին վիճելի են և սոսկ առարկություններ են հարուցում: Այսպես. այն կարծիքը, թե իբր «Պատճառական ածանցումը ժամանակակից հայերենում բառական նոր իմաստով նոր բայեր չի ստեղծում» և զուտ այուրահատուկ բերականական ածանցում է» (575), հիմնավոր չէ: Բանն այն է, որ հեղինակը դա հաստատելու համար բավարարվել է պատճառական ածանցման բերականական նշանակության առանձնահատուկ կողմերը բացատրելով և մի կողմ է նետել նրա բառատեղծական-բայականական արժեքը, որ շատ որոշակի արտահայտվել է դեռևս դրաբարում. համտ. փախչիլ-փախուցանել-փախցնել, վազել-վազեցուցանել-վազեցնել, հասանել-հասուցանել-հասցնել, ծառայել-ծառայեցուցանել-ծառայեցնել և այլն: Սկզբնատիպ և պատճառական ածանցում ունեցող բայերի միջև եղած բերականական տարբերությունները, որոնց վրա հենվում է հեղինակը, հիմք չեն տալիս պատճառականները զուտ բայաձևեր համարելու, որովհետև նրանք, օժտված լինելով բային բնորոշ բոլոր հատկանիշներով, սկզբնատիպ բայերից տարբերվում են նաև իրենց բառային ուրույն նշանակությամբ ու իմաստով, որ ավելի բարձր է, քան այս կամ այն ձևի բերականական նշանակությունը: Հասկանալի է, որ եթե այս տեսանկյունից քննվեն հարցը, ապա պատճառականները երբեք էլ բայաձևեր չէին դիտվի և, ասենք, ֆառացնելը ֆառել-ֆառանալ բայաձևերի շարքում ևս կդիտվեն, իբրև բառական նոր միավոր:

Իրավացի կերպով հարադրական կամ վերլուծական կազմության բայերը ճանաչելով իբրև

«բայական արժեք ունեցող բառական միավորներ», դրանց համար բերված օրինակների շարքում Արրահամյանը հիշատակում է նաև այնպիսի ձևեր (գետինը մտնել, երեսը պնդել, խելքը մտնել, միտքը փոխել, սիրտը շահել, սիրտը բանալ, գլուխը գալ, գլուխը քարին կամ քարով տալ և այլն), որոնք բառաձևա-իմաստային դրսևորում չեն ստացել, խիստ զգալիորեն պահպանում են իրենց բաղադրիչ մասերի շարահյուսական կապը և պարզապես հանդիսանում են դարձվածներ կամ ոճեր, որոնք հարադիր բառերի պես առատ են հայերենում:

Բայական իմաստի, ինչպես նաև սեռային ու հոլովառական հատկանիշներ տեսնելով անորոշից և եմ (էն) մասնիկից կաշմված՝ զուռալեն, գրգռալեն, ծլլալեն, զրնգալեն, լնգլնգալեն և այլն ձևերում, նա դրանք մի առանձին՝ ընթացակցական դերբայ է համարում. մինչդեռ հենց բերված օրինակները ցույց են տալիս. որ նրանց մի մասը խոսքի մասերի փոխանցմամբ նոր բառային արժեք է ստացել և, իբրև այդպիսին, մակբայ է, իսկ մի մասը, պահելով իր հոլովական նշանակությունը, մնում է իբրև անորոշի հոլովված ձև և, ասենք, փորփրելուց, զրելուց, խոսելով, երգելով և այլն հոլովաձևերի պես առանձին դերբայ չէ:

Հեղինակի այն միտքը, թե «ձևով ապառնի դերբային համընկնող նախադասության ինքնուրույն անդամը ոչ թե ապառնի դերբայ է, այլ անորոշ դերբայի հոլովաձև» (էջ 378), ևս ընդունելի չէ, որովհետև շարահյուսական կիրառությամբ և ձևաբանական իմաստի տեսակետից իրարից խստորեն տարբերվում են անորոշի սեռականը (օրինակ՝ «Աշխատելու արդյունքը այգ եղավ») և այդ ձևով գործածվող ապառնին (օրինակ՝ «Գնա կարգալու գիրք բեր»): առաջինը սովորաբար զրկված է լինում ապառնիության նշանակությունից, իսկ երկրորդում՝ ընդհակառակն, առկա է դա, որը և նրա ապառնի դերբայ լինելն է հաստատում:

Դժվար է համաձայնել հեղինակի նաև այն կարծիքին, թե ներդրել բայի փոխարեն վերջին շրջանում լայն շափով գործածվող ներդրել (համտ. ներդնելու եմ և ներ եմ դնելու, ներդնում եմ և ներ եմ դնում) ձևը սխալ է և ոչ օրինաչափական, որովհետև տվյալ դեպքում նման փոխանցումը տեղի է ունեցել անհրաժեշտաբար՝ ներ նախածանցի պահանջով, և այդպիսով հենց ետին պլան է մղվել ներդրելը, իսկ ներդրել ձևը ստացել է քաղաքացիական իրավունք, և, հետևաբար, սխալ գործածություն չէ: Նշենք նաև, որ աշխատության լեզուն ու ոճը տեղ-տեղ ծանր է ու դժվարամարս: Հեղինակը երբեմն իր մտքերն արտահայտում է երկարաշունչ նախադասություններով, կազմում

ու գործ է ածում անհաջող և անհասկանալի նոր
բառեր ու բառակապակցություններ (օրինակ՝
«...որոնք արտահայտում են նպատակամիտվույ
ակտիվ գործողության գաղափար»—64, «հիմ-
նական ձևությի մասնիկավորվածությունը»—
69, «ունեն Բեդմնավորության տարբեր բնույթ»
—70, «ածանցը շատ արտադրողական չի եղել»

—239, «ցուցաբերելով երկրնայրություն»—604
և այլն)։

Ամփոփենք։ Ա. Արրահամյանի «Բայր ժա-
մանակակից հայերենում» աշխատությունը գի-
տական լուրջ և արժեքավոր ուսումնասիրություն
է. այն նշանակալից ներգրում է հայագիտու-
թյան մեջ։

Ա.Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, *Շատախի բարբառը*, Երևանի Պետական համա-
լսարանի Հրատարակչություն, Երևան, 1962, 217 էջ, գինը 87 կոպ.:

Գրական լեզվի աննախընթաց զարգացման
ու տարածման և ժողովրդի կուլտուրական
մակարդակի բարձրացման հետ միաժամանակ
խարխիվում են տեղական բարբառների հիմքե-
րը, և նրանք աստիճանաբար մահանում են։
Հայերենի մի շարք բարբառներ արդեն պատ-
մության ասպարեզից դուրս են եկել և բնդմիշտ
անհայտ կմնան գիտությունը։ Ահա թե ինչու
բարբառների հետազոտության բնագավառում
կատարվող աշխատանքները արժանի է ար-
ժանանա խրախուսանքի։ Այս տեսակետից
շնորհակալ գործ է կատարել Մ. Մուրադյանը՝
ուսումնասիրելով մեր մահացող բարբառներից
մեկը՝ Շատախի բարբառը։ 1915 թ. հայկական
կոտորածների ժամանակ մի կերպ մազապուրծ
լինելով թուրքական յաթաղանից և Արևելքի
անապատներում ու Բրաքի տափաստաններում
երկար զննելուց հետո, շատախցիների հիմ-
նական մասը 1921 թ. ներգաղթում է Արևմտա-
կան Հայաստան և բնակություն հաստատում
Արտաշատի, Էջմիածնի, Աշտարակի, Վեդու-
շրջաններում և այլուր։ Գտնվելով այլ բարբառ-
ների միջավայրում՝ Շատախի բարբառը աս-
տիճանաբար զիջում է իր դիրքերը և նրանով
այժմ խոսում են միայն տարեց շատախցիները։

Բարբառի ուսումնասիրության համար նյու-
թեր համարելիս հեղինակը, ինչպես նշում է
ինքը, հաճախ է եղել շատախցիների շրջանում.
սովորել է բարբառը։ Իսկ սա նշանակում է, որ
նրա տված տեղեկությունները բարբառի մա-
սին վստահելի են։ Ժողովրդի կենդանի խոսքը
ուսումնասիրելու գույքնեթաց, նա ծանոթացել
է նաև բանահյուսական գրավոր նյութերին՝
«Մասնա ծանր» ժողովածուի Շատախի, Մովսի-
սյանի և այլոց հավաքածուներին, Ե. Լալայանի «Վասպուրականի
բանահյուսությունը» և այլ աղբյուրների։

Իր աշխատության սկզբում Մ. Մուրադյա-
նը պատմական որոշ տեղեկություններ է հա-
ղորդում Շատախի և նրա հայության մասին՝

նպատակ ունենալով բնիկացողին ծանոթացնել
հայ ժողովրդի այդ հատվածի անցյալին, և
սակա տեղում բարբառի բնությունը։

Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագի-
տության» մեջ (1911) Շատախի խոսվածքը
դասում է Վանի ենթաբարբառների շարքը, իսկ
«Քննություն Վանի բարբառի» (1952) աշխա-
տության մեջ այդ խոսվածքի մասին ոչինչ չի
ասում։ Շատախի և Վանի խոսվածքների ման-
րամասն համեմատական քննությունը գրախոս-
վող աշխատության հեղինակին բերում է այն
եզրակացության, որ Շատախի բարբառը, որոշ
բնիկացիություններ ունենալով Վանի բարբառի
հետ, վերջինիցս էականորեն տարբերվում է լեզ-
վական, հատկապես ձևաբանական, բաղադրիչ
առանձնահատկություններով, որոնք և հիմք են
տալիս Շատախի բարբառը համարել ինքու-
րայն և ոչ թե Վանի բարբառի ենթաբար-
բառ։ Այդ եզրակացության հետ պետք է հա-
մաձայնել։ Հոգնակի թվի կազմության, գոյա-
կանների ու գերանունների հոլովման, բայի
խոնարհման և հնչյունական փոփոխություն-
ների մեջ Շատախի և Վանի բարբառները մեծ
տարբերություններ ունեն, զրաբարի նկատ-
մամբ հաճախ անկախ դիրք են զբաղում՝ ան-
միջական շփման կետեր չունենալով միմյանց
հետ։ Հեղինակը գտնում է, որ Շատախի բար-
բառը ավելի մոտ է Մոկաց բարբառին, բայց
որովհետև վերջինս դեռևս ուսումնասիրված
չէ, վերջնական վճիռ չի տալիս նրանց՝ միմ-
յանց նկատմամբ ունեցած դիրքի մասին (են-
թաբարբառային կամ անկախ)։

Իր թեմային վերաբերող բնիկացուի հարցե-
րը լուծելուց հետո՝ հեղինակն անցնում է լեզ-
վական կոնկրետ նյութի քննությանը։ «Հնչյու-
նաբանություն» բաժնում (էջ 28—66) համա-
ռոտ գաղափար տալով բարբառի արտասանու-
կան առանձնահատկությունների մասին, նա
լեզվական հարուստ նյութի հիման վրա ներ-